ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МИНИСТР

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: minister@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 52 10 99
(374 10) 54 08 57

№ 1-01/366
«24» 03 2009թ.

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 16.03.09թ. N02/10.1/1708-09 հանձնարարականի ներկայացնում եմ «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթների վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության եզրակացությունը, որտեղ ներառվել են նաև ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ արդարադատության նախարարության եզրակացությունները:

Առդիր՝ 6 թերթ:

Հարգանքով՝

Ա. Հարությունյան

ՀՀ ... ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Մուտքագրման համար 043-3811
25 03 09թ.

52

Ջ. Ղիչյան
519137

Ա. Հարությունյան

0000273

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ասուիետ՝ Նախագիծ) վերաբերյալ

1. Նախագծի՝

1) 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) անվանումը և համարը, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները.

2) 1-ին հոդվածով նախատեսված՝ «որսի կենդանիների ցանկը հաստատում և դրանց որսի համար տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» փոփոխությունն անընդունելի է, քանի որ այն հակասում է Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությանը, 2-րդ հոդվածի «որսի կենդանիների ցանկ» հասկացությանը, 8-րդ հոդվածի 8-րդ կետին, ինչպես նաև 8-րդ հոդվածի 4-րդ կետին և 20-րդ հոդվածին (անուղղակի):

Բացի նշված հակասություններից, որսի կենդանիների ցանկի հաստատումն ու դրանց տարեկան թույլատրելի չափաքանակների սահմանումը զուտ մասնագիտական մոտեցում պահանջող գործընթաց է, որն իր մեջ ներառում է Օրենքի 8-րդ հոդվածով և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքով ամրագրված լիազորված մարմնի իրավասությունների սահմաններում իրականացվող գործառույթը՝ այդ թվում կենդանիների հաշվառման, մոնիտորինգի անցկացման, կադաստրի վարման և դրանց արդյունքում հավաքագրված տվյալների հիման վրա որսի կենդանիների տեսակների ու դրանց որսման չափաքանակների որոշումը:

Նշված իրավասությունը ՀՀ կառավարությանը վերապահելու դեպքում անհրաժեշտ կլինի Օրենքի բազմաթիվ հոդվածներում կատարել ծավալուն փոփոխություններ՝ ապահովելով նաև Օրենքի տրամաբանական ներքին կապը:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2009 թվականի հունվարի 15-ի N 9-Ն հրամանով հաստատվել և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում պետական գրանցում է ստացել «Որսի կանոնները հաստատելու մասին» նորմատիվ իրավական ակտը, որում ներառված են որսի օբյեկտ համարվող կենդանիների ցանկը և որսի ժամկետների ու չափաքանակների սահմանման պայմանները:

2. Եզրակացության 1-ին կետի հիմնավորմամբ անհրաժեշտ է հանել նաև Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածները:

3. Նախագծի 4-րդ հոդվածի անհրաժեշտությունը ևս չկա, քանի որ 8-րդ հոդվածի 3-րդ կետով հստակ սահմանված է, որ «լիազոր մարմինը վերահսկողություն է իրականացնում որսի կենդանիների և որսահանդակների պահպանության, պաշտպանության և կայուն օգտագործման, որսի և որսորդական տնտեսության վարման նկատմամբ»: Ուստի, միանշանակ պարզ է, որ հիշյալ վերահսկողության մեջ մտնում է նաև «որսագողության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացումը»:

4. Նախագծի 5-րդ և 9-րդ հոդվածները ևս անընդունելի են, քանի որ Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն «որսի թույլտվությունը, դա որսահանդակներում որս իրականացնելու համար սույն օրենքով սահմանված կարգով տրված միանվագ կամ սեզոնային այցելության թույլտվություն է, որտեղ նշվում են որսի վայրը, ձևը, այցելության ժամկետները, որսատեսակները և յուրաքանչյուր որսատեսակի քանակը», ուստի և նույն

իրավունքը վերապահող այլ փաստաթղթի «որսորդական ուղեգրի» անհրաժեշտություն չկա:

5. Նախագծի 6-րդ հոդվածի «ենթակետեր» բառը փոխարինել «կետեր» բառով և նույն հոդվածից հանել լրացվող՝

1) 4-րդ կետը, քանի որ որսի օբյեկտ չհամարվող կենդանիների ցանկի հաստատումն իրատեսական չէ, նկատի ունենալով որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների տեսակների քանակի անվերջանալիությունն ու փոփոխականությունը.

2) 7-րդ կետը, քանի որ գնված որսի արգասիքի փաստաթղթերի ձևակերպումը որսի կանոններով կարգավորվող իրավահարաբերությունների շրջանակներից դուրս է.

3) 9-րդ կետը, քանի որ ՀՀ սահմանադրության 83.5 հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունները կարող են սահմանվել միայն օրենքով:

6. Նախագծի 7-րդ հոդվածի «թակարդները» բառն անհրաժեշտ է փոխարինել «և հինգ համարից ոչ խոշոր թակարդները, որոնց օգտագործման կարգը սահմանում է լիազոր մարմինը» բառերով, այլ ոչ թե լրացնել նախագծում նշված բառերը:

7. Նախագծի 8-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել՝

1) «հետևյալ վերանգրով» բառերը.

2) 8-րդ և 12-րդ կետերը, քանի որ վերջիններս որսի ձև կամ միջոց չեն հանդիսանում:

8. Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, նախագծի 10-րդ հոդվածում «հրապարակմանը» բառն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվանը» բառերով, իսկ «օրվանից» բառը «օրը» բառով:

Նկատի ունենալով Օրենքում առկա բացը շտապ շտկելու կարևորությունն, առաջարկվում է Նախագծում ներառել Օրենքի 2-րդ հոդվածի վերաբերյալ հետևյալ լրացումը.

«Հոդված ... Օրենքի 2-րդ հոդվածի «որսորդական մինիմում» պարբերության «համապատասխան՝» բառից հետո լրացնել «որսի կանոնների,» բառերը»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. Նախագծի 1-ին հոդվածն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն «Օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են "Հայաստանի Հանրապետության" բառերը, դրա ընդունման օրը և օրենսգրքի վերնագիրը»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն /ընդունման օր է համարվում՝ ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը/, որոնք նշվում են թվարկված հաջորդականությամբ: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս չի նշվում օրենսգրքի թիվը:

2. Նախագծի համարակալումն անհրաժեշտ է համաձայնեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված իրավական ակտերի համարակալմանը ներկայացվող պահանջներին, մասնավորապես անրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենքներում հոդվածները բաժանվում են համարակալված մասերի, մասերը կետերի, իսկ կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, այլ ոչ թե հայերեն տառերով:

3. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակմանը» բառն անհրաժեշտ է փոխարինել «Հրապարակման արվանը» բառերով, իսկ «օրվանից» բառը «օրը» բառով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող., 1
Հեռ.՝ (+374 10) 59 53 04
Ֆաքս՝ (+374 10) 52 42 82
էլ. փոստ՝ minister@minfin.am
Վեբ կայք՝ www.minfin.am

1/4.4-4/660-09 N 23.03.09

Ձեր N _____

ՀՀ բնապահպանության նախարար՝
պրն. Ա.Հարությունյանին

Ի կատարումն ՀՀ վարչապետի 16.03.2009թ.
N 02/10.1/1708-09 հանձնարարականի

Հարգելի նախարար

««Ոսկի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (այսուհետ՝ Նախագիծ) և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի կապակցությամբ մեր իրավասությունների շրջանակներում հայտնում ենք.

Նախագծի՝

ա/ 1-ին հոդվածի «110507» թիվն անհրաժեշտ է փոխարինել «ՀՕ -176-Ն» թվով:

բ/ 1-ին հոդվածով նախատեսվող փոփոխության վերաբերյալ հայտնում ենք, որ եթե նշված փոփոխությունը վերաբերվում է ««Ոսկի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ նախադասությանը /ինչպես նշված է Նախագծում/, ապա այն անընդունելի է, քանի որ հակասում է նույն հոդվածի նույն կետի 1-ին նախադասությանը: Իսկ եթե տեղի է ունեցել վրիպակ և առաջարկվող փոփոխությունը վերաբերվում է 5-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին նախադասությանը, ապա առաջարկվում է խմբագրել Նախագիծը:

գ/ 3-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ Օրենքի 7-րդ հոդվածը 10-րդ ենթակետ արդեն իսկ ունի:

դ/ 7-րդ հոդվածի կապակցությամբ առաջարկվում է նույն լրացումը կատարել նաև Օրենքի 8-րդ հոդվածում:

ե/ 9-րդ հոդվածի կապակցությամբ առաջարկվում է «որսորդական ուղեգիր» հասկացության բացատրությունը սահմանել Օրենքի՝ «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները» հոդվածում:

զ/ Առաջարկվում է նաև Նախագծով սահմանել որսորդական ուղեգրի տրման կարգը, մերժման հիմքերը, հստակեցնել թե ո՞վ է սահմանելու դրա ընդհանուր ձևը /եթե այն այդպիսինն է լինելու/:

Հարգանքով՝ Տ.Դավթյան

կատ՝. Շ.Կարապետյան
☎ 59-52-56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 1486
«20» 03 2009 թ.

0078 Երևան, Դալարյան 41/ա, հեռ. 380-389
էլ. փոստ info@moj.am

Հայաստանի Հանրապետության բնապահպանության
նախարար պարոն Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 16-ի
թիվ 02/10.1/1708-09 հանձնարարականի

Հարգելի պարոն Հարությունյան

Կից Ձեզ ենք ներկայացնում «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հարգանքով՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ բնապահպանության
նախարարության աշխատակազմ
Ընդհանուր բաժին
Մուտք № 4-743
24 03 2009 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ օրենք/ ճիշտ անվանումը և համարը, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Բացի այդ նախագծի 1-ին հոդվածի վերաբերյալ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի համաձայն նախադասությունները չեն համարակալվում և բացի այդ սկսվում են մեծատառով:

Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված դրույթը հակասում է Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությանը և 8-րդ հոդվածի 8-րդ կետին, որոնց համաձայն «Որսի կենդանիների ցանկը հաստատում եւ դրանց որսի համար նախատեսվող տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության լիազորած պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին)»: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ որսի կենդանիների ցանկը, արդեն իսկ հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2009 թվականի հունվարի 15-ի թիվ 9-Ն հրամանով, որը պետական գրանցում է ստացել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

2. Նախագծի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, , 6-րդ հոդվածներում, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները «ենթակետը», «ենթակետից», «ենթակետերով» բառերը անհրաժեշտ է փոխարինել «կետը», «կետից», «կետերով» բառերով:

3. Նախագծի 2-րդ հոդվածի անհրաժեշտությունը չկա, քանի որ սահմանվող դրույթը, արդեն իսկ սահմանված է Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասության մեջ:

4. Նախագծի 3-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ Օրենքի 7-րդ հոդվածում արդեն առկա է 10-րդ կետ, ուստի և նկատի ունենալով «Իրավական ակտերի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, հոդվածն անհրաժեշտ է լրացնել նոր 9.1. կետով:

5. Նախագծի 4-րդ հոդվածի անհրաժեշտությունը չկա, քանի որ Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետով հստակ սահմանված է, որ «լիազոր մարմինը վերահսկողություն է իրականացնում որսի կենդանիների եւ որսահանդակների պահպանության, պաշտպանության եւ կայուն օգտագործման, որսի եւ որսորդական տնտեսության վարման նկատմամբ», ուստի և միանշանակ պարզ է, որ հիշյալ վերահսկողության մեջ է մտնում նաև «որսագողության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացումը»:

6. Նախագծի 5-րդ և 9-րդ հոդվածներն անընդունելի են, քանի որ Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն «որսի թույլտվությունը, դա որսահանդակներում որս իրականացնելու համար սույն օրենքով սահմանված կարգով տրված միանվագ կամ սեզոնային այցելության թույլտվությունն է, որտեղ նշվում են որսի վայրը, ձեւը, այցելության ժամկետները, որսատեսակները եւ յուրաքանչյուր որսատեսակի քանակը», ուստի և նույն իրավունքը վերապահող այլ փաստաթղթի «որսորդական ուղեգրի» անհրաժեշտությունը չկա:

7. Նախագծի 6-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել լրացվող 9-րդ կետը, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5 հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունները կարող են սահմանվել միայն օրենքով:

8. Նախագծի 7-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է «թակարդները» բառը փոխարինել, «և 5 համարից ոչ խոշոր թակարդները, որոնց օգտագործման կարգը սահմանում է լիազոր մարմինը» բառերով, այլ ոչ թե լրացնել նախագծում նշված բառերը:

9. Նախագծի 8-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել «հետևյալ վերնագրով» բառերը:

10. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, նախագծի 10-րդ հոդվածում «հրապարակմանը» բառն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվանը» բառերով, իսկ «օրվանից» բառը «օրը» բառով:

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՇԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»

~~Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ~~

1. Նախագծի 1-ին հոդվածն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն «Օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են "Հայաստանի Հանրապետության" բառերը, դրա ընդունման օրը եւ օրենսգրքի վերնագիրը»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն /ընդունման օր է համարվում՝ ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը/, որոնք նշվում են թվարկված հաջորդականությամբ: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս չի նշվում օրենսգրքի թիվը:

2. Նախագիծի համարակալումն անհրաժեշտ է համաձայնեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով սահմանված իրավական ակտերի համարակալմանը ներկայացվող պահանջներին, մասնավորապես անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենքներում հոդվածները բաժանվում են համարակալված մասերի, մասերը կետերի իսկ մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, այլ ոչ թե հայերեն տառերով:

3. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակմանը» բառն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվանը» բառերով, իսկ «օրվանից» բառը «օրը» բառով:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ՝ Գ. Մալխասյան

Իրավական ակտերի փորձաքննության
վարչության պետ՝ Կ. Խտրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ
MINISTRY OF AGRICULTURE OF THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER
МИНИСТЕРСТВО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МИНИСТР

Ձեր _____ N _____ 07-14.2-03/1410 N 20.03.2009թ.

ՀՀ բնապահպանության նախարար
պարոն Ա. Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան,

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2009 թվականի մարտի 16-ի N 02/10.1/1708-09 գրությունհանձնարարականի՝ հայտնում եմ, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» և «Ոռոգի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ, առաջարկում եմ՝

ՀՀ օրենքների նախագծերը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

«Ոռոգի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ, առաջարկում եմ՝

1. 8-րդ հոդվածի 1-ին տողը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով»,
2. 8-րդ հոդվածի 21.1 հոդվածի 2-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «2/ ռազմական, ինչպես նաև բոլոր տեսակի ակոսավոր զենքերի օգտագործումը,» և լրացնել 15-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ՝ «15/ նշանառության օպտիկական սրաքավորումների կիրառումով որսը:»,
3. 9-րդ հոդվածի բովանդակությունը լրացնել օրենքի 2-րդ հոդվածով սահմանվող հասկացություններում:

Հարգանքով՝

Ա. Գրիգորյան

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ
Ընդհանուր բաժին
Մտից № 4-453
«24» 03 2009թ.

Բուսաբուծության, անտառային տնտեսության և թույսերի պաշտպանության վարչություն
Հեռ.՝ 52-37-93

375010, Երևան-10, Հանրապետության հր. Կառավարական տուն 3
3 Government Building, Republic Square, Yerevan, 375010, Republic of Armenia
Дом правительства, 3, Площадь Республики, Ереван 375010, РА
Հեռ. / Tel / Тел: (374 10) 524 641
Ֆաքս / Fax / Факс: (374 10) 523 793
Էլ.փոստ / E-mail / эл.почта : frdmoa@agrounit.am